ԿԱՐԱՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆ

ԹՈՐԳՈՄԻ «ՈՐՍԿԱՆ» ԽՈՒՄԲԸ ԵՒ ՆՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ՀԵՏԱԳԱ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Դեռեւս 1898 թ. ապրիլին Թիֆլիսում կայացած ՀՅԴ II ընդհանուր ժողովը, անդրադառնալով արշավախմբերի հարցի քննարկմանը, ընդունել էր որոշում. «Ապստամբական գործը յաջող կամ անյաջող կերպով կատարուած պարագային, երբ արդէն Երկրի մէջ կռիւը սկսած է... Երկրէն դուրս կազմուած մարտական խումբերու եւ անոնց հետեւող կամաւորներու միջոցով սահմաններէն ակտիւ միջամտութիւն կատարուի՝ թէ՛ իբր արձագանք Երկրի կռուին եւ թէ՛ իբր պաշտպանութիւն կամ օգնութիւն ընդհանուր գործին»[1]: Իսկ ՀՅԴ III ընդհանուր ժողովը 1904 թ. փետրվարին արշավախմբերի կազմակերպման գործը հանձնարարել էր ՀՅԴ Ջրաբերդի (Կարս) եւ Մրգաստանի (Երեւան) կենտրոնական կոմիտեներին՝ «Ձիաւոր խմբով կամ որեւէ ուրիշ միջոցով Սասուն հասցնել ուժանակ, ռումբեր, հրացանի մասեր, բերդանի գիլզէներ, 50.000 մոսինի փամփուշտ եւ բերդանի փամփուշտ կարելի եղածին չափ մեծ քանակութեամբ եւ այս ամբողջը ոչ ուշ, քան մայիսի կէսը, 2. Սասնոյ շարժումները սկսելուն պէս... ձայնակցիլ եւ օժանդակել Երկրի շարժումին՝ յարձակողական այլեւայլ կռուի կամ տեռորի բնաւորութիւն կրող ձեռնարկներով, թէ սահմանի վրայ, թէ Տաճկաստանի սահմանակից վայրերու մէջ: Այս ձեռնարկները պիտի բլլան յարձակումներ թուրքական պահականոցներու եւ պոստերու վրայ, աւերում կառավարական հիմնարկութիւններու, սպանութիւն կամ գերում կառավարական պաշտօնեաներու»: Միաժամանակ ընդհանուր ժողովը հստակեցնելով Սասնո ապստամբությանը զուգահեռ ձեռնարկվելիք գործողությունների ծավալն ու տեւողությունը՝ գտնում էր, որ «ամէն մէկ խումբ բաղկացած բլլայ ոչ աւելի, քան 30 հոգիէ: Բոլոր այդ ձեռնարկները պիտի դասաւորուին Սասնոյ կռուին տեւողութեան համեմատ եւ տեղի չպիտի ունենան միաժամանակ»[2]:

Ընդհանուր ժողովի ավարտից հետո Թորգոմը (Թուման Թումյանց), Աշոտ Երկաթը (Արմենակ Լեւոնյան) եւ Կայծակ Վաղարշակը (Վաղարշակ Բաղդասարյան) վերադառնում են Կովկաս՝ կազմակերպելու համար նոր մարտական խմբեր, որոնց նպատակն այս անգամ այլ բնույթ էր կրելու: Ելնելով ՀՅԴ ընդհանուր ժողովի վերոհիշյալ որոշումներից՝ Կայծակ Վաղարշակի եւ Թորգոմի խմբերը պետք է. «երկիր ոտք դնէին նախագծուած յարձակողական ծրագրով՝ ընտրած լինելով այս կամ այն հարմար կէ-

1 «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար» (այսուհետեւ՝ Նիւթեր...), խմբ. Հր. Տասնապետեանի, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, Պէյրութ, «Վահէ Սեթեան» տպարան, Բ. հատ., բ. տպագր., 1985, էջ 59:

2 Անդ, էջ 111:

գը»[3]: Որպեսզի ավելի հստակ դառնան խմբերի անցման գծերն ու բուն նպատակը՝ 1904 թ. ապրիլի 5-12-ը Ալեքսանդրապոլում գումարվում է խորհրդակցություն, որին որպես Կարսի ներկայացուցիչներ մասնակցում էին Տուրբախը (Հարություն Կիրակոսյան-Այվազյան), Ա. Հայկունին (Համազասպ Նորհատյան), Դ. Հայկունին (Երվանդ Համամշյան), իսկ Երկրի գործիչներից՝ Երկաթը, Թ-որգոմը, Կայծակ Վաղարշակը: Ալեքսանդրապոլի խորհրդակցությունը խմբերի Երկիր անցման համար նպատակահարմար է համարում Տաք աղբյուրի գիծը, որով հեպագայում անցնում են Երեւանում կազմավորված Երկաթի, Դայլ Վահանի (Մինաս Տոլպաշյան) «Արտավազդ» եւ խմբապետ Միհրանի (Դաբրիել Քեշիշյան) «Մասիս» խմբերը, որոնցից եւ ոչ մեկը սահմանը հատելիս ընդհարում չի ունենում: Դրան հակառակ Ալեքսանդրապոլի ժողովը խիստ անհրաժեշտ է գտնում Կարսից անցնող գծերը, ուստի այդ առթիվ որոշում է. «Ջրաբերդի կեդրոնական կոմիտէն անմիջապէս մարդիկ ուղարկէ ուսումնասիրելու եւ բանալու հին ու նոր գծերը»[4]: Դրա իրագործումը հանձնարարվում է Տուրբախին ու Որսորդ Դեւորգին: Թեեւ ժողովը միաժամանակ որոշում է. «Զէնքի փոխադրութեան եւ խմբերի կազմակերպութեան գործը ենթարկել ամենախիստ գաղտնապահութեան»[5], սակայն, ինչպես հետագայում կտեսնենք, ռուսական ժանդարմերիան եւ թուրքական սահմանապահ ուժերը մինչեւ խմբերի մեկնելն իմանում են նրանց անցնելու մասին եւ դաժան հաշվեհարդար են տեսնում սահմանն անցնող խմբերի հետ: Այսինքն, չնայած ձեռք առնված միջոցներին՝ Կարսի գիծն իրեն չի արդարացնում:

Ալեքսանդրապոլի ժողովը միաժամանակ անդրադառնում է նաեւ արշավախմբերի նպատակին, որը պետք է լիներ՝ «Ջօրանոց-պահականոցների ոչնչացումը թէ՛ սահմանի վրայ եւ թէ՛ ներսը»[6]: Մյուս բոլոր կետերում ժողովը նույնությամբ կրկնում է ընդհանուր ժողովի որոշումները:

1904 թ. մայիսի 16-ին առաջինը Երկիր է անցնում Երեւանում կազմավորված Աշոտ Երկաթի խումբը, որին հունիսի 6-ին հետեւում է Կարսի մարզում կազմավորված Կայծակ Վաղարշակի «Դժոխք» հեծելախումբը, իսկ հունիսի 25-ին՝ Հնչակյանների կազմավորած «Արծիվ» խումբը: Այս խմբերի կազմավորումն ու սահմանանցումը համարելով առանձին ուսումնասիրության նյութ՝ մենք նրանց չենք անդրադառնա, նշենք միայն, որ թեեւ նրանցից «Դժոխք» ու «Արծիվ» խմբերին մասամբ հաջողվում է իրագործել իրենց առջեւ դրած խնդիրները, սակայն այս բոլոր խմբերն էլ գլխովին ջախջախվում են թուրքքրդական ուժերի հետ ունեցած բախումների հետեւանքով («Դժոխք» հեծելախմբի ջախջախման գործում իրենց ներդրումն են ունենում նաեւ ռուս սահմանապահները):

1904 թ. Երկիր անցնելու նպատակով Կարսի մարզում իր II խումբն է կազմավորում Թ-որգոմը (նրա գլխավորած առաջին խումբը հանրահայտ «Մրրիկ» հեծելազորն էր, որին 1903 թ. հունիսին հաջողվել էր հասնել Սասուն):

3 Անդ, էջ 201:
4 Անդ, էջ 195:
5 Անդ:
6 Անդ, էջ 196:

Թորգոմի «Ռոսկան» խումբը ՀՅԴ բյուրոյի որոշմամբ պետք է Երկիր անցներ Օլթիի շրջանից: ՀՅԴ բյուրոն եւ Կարսի «Ջրաբերդ» կենտրոնական կոմիտեն այն տեսակետն էին հայտնել, որ «1. Օլթիի ռուս-տաճկական սահմանների մօտերը հայկական գիւղեր չկային, որոնք խմբի ընդհարման դէպքում կարող էին վտանգուել: 2. Այդ գիծը լեռնային էր եւ հեշտ էր նրա անանցանելի վայրերով աննկատ եւ անվտանգ անցնել Բասեն: 3. Այդ ուղղութեամբ դեռ հայդուկային խմբեր չէին անցել եւ ռուս-տաճկական սահմանապահ զորքերի հսկողութիւնը խիստ չէր»[7]: ՀՅԴ բյուրոն եւ Կարսի ՀՅԴ կենտրոնական կոմիտեն հրահանգել էին խմբին՝ «ամէն կերպ խուսափել ռուս զօրքերի հետ ընդհարուելուց, աւելին, նոյնիսկ այն դէպքում, երբ ռուս սահմանապահ զօրքերը կրակ բանային խմբի վրայ, նրանք չպէտք է պատասխանէին»[8]: Այս կարգադրությունը հետագայում ճակատագրական է լինում խմբի համար: Այն նաեւ պատճառ է դառնում, որ Արամայիս Ազնավուրյանը չմասնակցի խմբի ռազմերթին: Ինչպես իրավացիորեն նշել է նա, «ինչպէ՞ս ես պիտի ձեռքերս ծալած նայեմ, թէ ինչպէս ընկերներս մէկիկ մէկիկ ընկնում են ռուսական գնդակներից ու հրացանը ուսիս՝ չպատասխանեմ»: Արամայիսն առարկում է նաեւ Օլթիով անցնելու գաղափարին՝ գտնելով, որ այդ «ճանապարհները երկար են եւ ոչ մի համակիր տարը չկայ այդ երկար ճանապարհի վրայ՝ խմբին կարիքի դէպքում հարկաւոր օժանդակութիւնը ցոյց տալու համար»[9]: Նույն կարծիքն է հայտնում նաեւ Ռոսորդ Գեւորգը, բայց այս առարկությունները, դժբախտաբար, ուշադրության չեն արժանանում, եւ ՀՅԴ բյուրոյի ու կենտրոնական կոմիտեի որոշումները կատարվում են անշեղորեն:

Խմբի զենքերի մի մասի փոխադրման գործն իրականացնում է Ռոսորդ Գեւորգը, իսկ մյուս մասը՝ Արմենը: Նա իր ընկերների հետ զենքն ու մյուս անհրաժեշտ պարագաները Կարսից Չախմախ գյուղով փոխադրում է Օլթի, որտեղից այն մեկ այլ խումբ հասցնում է Օլթիի գավառի սահմանամերձ Թումրութ գյուղը, որտեղ էլ հուլիսի 2-ին հավաքվում է 61 հոգուց բաղկացած «Ռոսկան» խումբը:

Մինչ Ռոսորդ Գեւորգն ու Արմենը զբաղված էին խմբի զենքի փոխադրմամբ, Թորգոմը խմբի այն անդամների հետ, որոնք նախկինում ծառայել էին ռուսական բանակում եւ քաջահմուտ էին ռազմական արվեստում, խմբի մյուս անդամներին սովորեցնում էր ձիավարություն, զինավարժություն եւ հրաձգություն[10]: Այս մասին Գարեգին Խաժակին (Գարեգին Բաբայան) ուղղված իր վերջին՝ 1904 թ. հունիսի 30-ի թվակիր նամակում Թորգոմը հետեւյալն է գրում. «Երեւակայիր, որ այս երկու երեք ամսուայ ընթացքում երեք օր շարունակ մէկ տեղ չեմ կարողացել մնալ, շարունակ ստիպուած եմ եղել այս ու այն կողմը վազել, հասնել սամանագլուխները եւ ընթացք տալ Երկրացիներին (արեւմտահայությանը - Կ. Հ.) աջակցելու գործին: Թէեւ իմ նպատակն էր մայիսին (1904 թ. - Կ. Հ.) նէրս մտնիլ, սակայն, ընկերներս ճնշում գործ դնելով վրաս՝ հարկադրեցին մնալ այստեղ

7 «Արամայիս Ազնաւուրեանի յուշերը», գրի առաւ Ե. Հայրապետեան. «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, յուլիս, 1938, թիւ 9, էջ 140-141:

8 Անդ, էջ 141:

9 Անդ:

10 Տե՛ս **Ա. Դիլանեան**, Թումանի խումբին հետ. «Հայրենիք» ամսագիր, դեկտեմբեր, 1939, թիւ 2, էջ 62:

եւ իբրեւ Երկրի փարածքին ու պայմաններին նախածանօթ մի անձ եւ Բարձրաւանդակի (Սասունի - Կ. Ղ.) ներկայացուցիչ՝ նպատակայարմար ուղղութիւն տալ ռազմական-աջակից խմբերին (խոսքը Կայծակ Վաղարշակի «Դժոխք» եւ իր՝ Թորգոմի «Որսկան» խմբի մասին է - Կ. Ղ.): Մինչեւ ցարդ բաւական յաջողութեամբ կատարած լինելով իմ գործը, այժմ անցնելու հերթը հասել է ինձ...»[11]:

Խմբի անդամներն էին Որսորդ Գեւորգը, որն աննման նշանառու էր, Լեւոն Քալանթարյանը, Անուշավան Դիլանյանը, կարնեցի Գարեգին Մալեմազյանը, Քյոսա Միքայել Բարոյանը, Ասլան Բալասին (կարսեցի Մուկուչ), Պաղվալի Վաղոն (Ավետիս Ղարիբյան), Արմենը եւ ուրիշներ: Խմբի բժիշկներն էին Սիսակն ու Մարտինը: Թեեւ խումբը պետք է բաղկացած լիներ 60 հոգուց, բայց. «խնդրատուների թիւը հասաւ 200-ի, - հիշում է Արմենը, - խնդրատուները ուղղակի աղաչում էին իրենց բոլորին ընդունել խմբի մէջ: Շատերը ցանկութիւն էին յայտնում իրանց սեփական զէնքով եւ ձիով միանալ խմբին: Քիչ չէին եւ այնպիսիները, որոնք համաձայն էին գնալ խմբի հետ, թէկուզ որպէս բեռնակիր»[12]: Բոլոր խնդրատուների պահանջը բավարարել հնարավոր չէր, ուստի Թորգոմը խմբում ընդգրկում է առավել փորձառուներին: Ի վերջո խմբի թիվը հասնում է 61-ի (ըստ Արմենի՝ 62, ըստ Ա. Դիլանյանի՝ 64): «Որսկան» խմբի ծրագիրն էր՝ ահաբեկել թուրք սահմանային պահակախումբը, հետ վերադառնալ ու նոր, թարմ ուժերով նոր ներխուժում կատարել թուրքական սահմաններից ներս: Այս մասին Ա. Դիլանյանը հետեւյալն է գրում. «Խումբը Ղարա-Բողազի բարձունքներով պիտի անցնէր սահմանագիծը, ոչնչացնէր տաճկական մօտակայ սահմանապահ զինուորական կայանն ու բաժնուելով մանր խումբերու՝ նառիմանցիներուն ծանօթ ճամբաներով պիտի յետ դառնար ու պարտկուէր Չուրդանէսի հայկական գիւղերու ծօցին մէջ»[13]: Այս ծրագրի նպատակն էր՝ ցույց տալ Եւրոպային, որ. «հայութիւնը բնաւ հրաժարած չէ իր դարաւոր պայքարէն եւ որ անհաւասար գօտեմարտի մէջ է թուրք բռնակալ իշխանութեան հետ»[14]: Իսկ ըստ Ռուբենի՝ խմբի նպատակն էր. «յարձակուել թրքական սահմաններու վրայ, թերեւս թրքական զօրքերու մէկ մասը քաշել դէպի սահմանը, եւ այսպիսով թեթեւացնել Սասունի վիճակը»[15]: Այս առթիվ հետաքրքրական է խմբապետ Թորգոմի տեսակետը: Գ. Խաժակին ուղղված 1904 հունիսի 30-ի թվակիր նամակում նա գրում է. «Արդէն ամէն պատրաստութիւն տեսնուած է, եւ մի քանի օրէն 60 քաջերով կ՚անցնիմ մօտակայ մի վայր՝ տակն ու վրայ անելու (թուրքական զորանոցները - Կ. Ղ.), լուծելու նահատակ ընկերներուս վրէժը եւ մի անգամ եւս ապացուցելու օտարին, որ հայն էլ գիտէ իր ազատութեան համար խիզախօրէն կռուիլ եւ մեռնիլ... Հանգիստ հոգով եւ մէծ ուրախութեամբ դիմում եմ դէպի արիւն արցունքով ներկուած Երկիրը՝ սրբազան պարտականութիւնս կատարելու»[16]:

Խմբապետ Թորգոմի հրամանով խումբը բաժանվում է 4 տասնյակի՝ յուրաքանչյու-

11 Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ), ֆ. 402, ց. 1, գ. 24, թթ. 9-10:
12 «Արմէնի յուշերը», գրի առաւ Արամ Ալչուճեան. «Հայրենիք» ամսագիր, մայիս-յունիս, 1945, թիւ 3, էջ 37:
13 **Դիլանեան Ա.**, Թումանի խումբին հետ, «Հայրենիք» ամսագիր, դեկտեմբեր, 1939, թիւ 2, էջ 63:
14 Անդ, էջ 62:
15 **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ա. հատ., Կարսի հնոցին մէջ, Երեւան, «Աղանա» հրատ., 1990, էջ 350:
16 ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 24, թ. 10:

բում 15-16 հոգի[17]: Խմբի անդամները ստանում են լազի շորեր, մոսին հրացան, ատրճանակ, դաշույն, իսկ փամփուշտ ամեն մեկը կարող էր վերցնել այնքան, որքան կարող էր: Ամեն մի մարտիկ ստանում է նաեւ 2 ռումբ, իսկ դասնապետերը՝ նաեւ մառզեր ատրճանակներ: «Միջին հաշուով իւրաքանչիւր մարտիկ ունէր 2 փութ 20 գրուանքայ բեռ, - հիշում է Արմենը. - Մնացած զէնքերն ու պարէնը բաժանուեցին ութ բեռնակիրների մէջ, որոնք զինուած էին միայն ատրճանակներով»[18]: «Ռուսական» խմբին ընդհանուր հաշվով տրվել էր 70 ռումբ, 55 հրացան, 45 ատրճանակ, 40.000 փամփուշտ[19]: Խմբի վալադներն էին Նիկողոսն ու Սերոբը, Պետրոսը, Առաքելն ու Նապոն:

Խումբն իր դրոշակը ստանում է Կարսի օրիորդներից, որի վրա գրված էր «Մահ կամ ազատութիւն» նշանաբանը, իսկ հակառակ կողմում՝ «Ամենայն տեղ մահը մի է...» քառյակը: Գրոշակի վրա խմբի բոլոր անդամները երդվում են բարձր պահել դրոշի եւ Հ.Յ.Գ. պատիվը: Քահանան տալիս է իր օրհնությունը: Ճառով հանդես է գալիս խմբապետ Թորգոմը, իսկ այնուհետեւ խումբն առաջ է շարժվում: Խմբի հետնապահներ են ընտրվում Քյոսա Միքայելը, Գարեգինը, Գեւորգը, Էրզրումցի Եղիշեն (Սեւ Օձ), ղազախեցի Օհանեսը, Արմենը, իսկ հետախույզներ են նշանակվում II վաշտի վաշտապետ Պետրոսը, երեք մարտիկներ եւ վալադները[20]:

«Թէ՛ գիւղից դուրս գալու ժամանակ եւ թէ՛ մեր հետագայ ճանապարհը գնալու ժամանակ պիտի անցնէինք ձորով, սարերի նեղ ուղիներով, - հիշում է Արմենը, - ուստի կանգնած էինք մէկական՝ առաջին վաշտից մինչեւ վերջին բեռնակիրը»[21]: Խումբը Ղարաբողազով (կիրճ Օլթիի շրջանում - Կ. Հ.) պետք է անցներ Պուլիկ աղբյուր-Նառիման-տաճկական Բասեն: 1904 թ. հուլիսի 2-ին (ն.տ. հուլիսի 15-ին) խումբն աննկատ անցնում է ռուս-թուրքական սահմանն ու բարձրանում է Զարդանիսի աղբյուրը: «Արդէն լուսանալու մօտ էր, - հիշում է խմբի մասնակիցներից մեկը, - խմբապետը կարգադրեց, որ աղբիւրից բարձրանանք 100-150 քայլ եւ հանգիստ առնինք՝ առանց զինաթափ լինելու»[22]: Այդ միջոցին 4 ռուս զինվոր գալիս են աղբյուրից ջուր խմելու եւ «Հոն կը տեսնեն երկու շալակաւորներ՝ քնացած: Կը զողնան մէկուն շալակը (ի նկատի ունի ուսապարկը - Կ. Հ.) եւ կը տանին պահակատուն, - գրում է Ռուբենը. - Երբ շալակաւորները կ՛արթնանան ու կը տեսնեն, որ թալանուած են, անմիջապէս կը բարձրանան լեռը՝ տեղեկութիւն տալու Թումանին»[23]: Շալակավորները, սակայն, դրանով մատնում են խմբի տեղը, քանի որ. «երեք ռուս զինուորներ հետեւում են նրանց»[24]: Իսկ ըստ Ա. Ազնավուրյանի վկայության. «Գնդապետ Բրկով, հակառակ ձեռք առնուած բոլոր զգուշութիւնների, իր բազմատեսակ

17 Տեմ «Արմէնի յուշերը», «Հայրենիք» ամսագիր, մայիս-յունիս, 1945, թիւ 3, էջ 40:

18 Անդ:

19 Անդ, էջ 41:

20 Տեմ անդ, էջ 40-41:

21 Անդ, էջ 41:

22 «Ռուսական» խմբի կռիւը Զարդանիսի մօտ. «Դրօշակ», օրգան Հ. Յ. Դաշնակցութեան, Ժընեւ, օգոստոս, 1904, թիւ 8:

23 Անդ, տես նաեւ **Ռուբէն**, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 350, նաեւ «Յեղափոխական ալպոմ», խմբ. Աւ, հատ. 7, Պէյրութ, 1967, էջ 107:

24 «Ռուսական» խմբի կռիւը Զարդանիսի մօտ, նաեւ «Յեղափոխական ալպոմ», հատ. 7, էջ 107:

լրտեսներու միջոցով պեղեակ էր դարձել խմբի շարժումներին եւ նոյնիսկ մեկնումի օրն ու ուղղութիւնը պարզել էր իր համար: Երբ Թումանի խումբը շարժում է, Բրկովն էլ անմիջապէս վերցնում է 150 ձիաւոր զինուորներ ու հետապնդում է խմբին»[25]: Նոյն բանը հաստատվում է նաեւ արխիվային մի փաստաթղթով[26]: Մենք երկու վարկածն էլ չենք բացառում: Փաստն այն է, որ առավոտյան մինչ Որսորդ Գեւորգն ու Թորգոմը մտածում էին խմբի հետագա անելիքների մասին, «150-ի չափ սահմանապահ զօրքեր կը շրջապատեն անոնց դիրքերը՝ միաժամանակ լուր տալով տաճիկ ոյժերուն»[27]: Թորգոմն անմիջապես խմբին առաջ շարժվելու հրաման է տալիս: Խումբը մեծ դժվարությամբ բարձրանում է առջեւի լեռը, իսկ այնուհետեւ շարունակում է խորանալ սահմանի հակառակ կողմում: «Կարծում էինք, որ ռուսները չեն հետապնդի մեզ տաճկական հողում»[28], - գրում է Արմենը: Բայց տեղի է ունենում հակառակը՝ ռուս սահմանապահները շարունակում են հետապնդել խմբին: «Տեսնելով, որ ռուսները մեզ վրայ կրակում են, խմբապետները որոշեցին երկու մասի բաժանուել: Որսորդը իր տասնեակներով աւելի առաջ գնաց ու դիրք բռնեց Ղարա-Բողազի քարում, իսկ Թորգոմը՝ իր զինուորները երեք մասի բաժանեց եւ յարմար դիրքեր բռնեց ռուսական սահմանագլխից մօտ երկու վերստ հեռաւորութեան վրայ գտնուող Լիրկ բլրի գագաթներին»[29]: Ռուս զինվորները գնդապետ Բրկովի հրամանով լեռան գագաթից կրակ են տեղում հայ մարտիկների վրա, բայց վերջիններս չեն պատասխանում եւ փորձում են ռուսներին հասկացնել, որ իրենք ռուս զինվորների դեմ ոչինչ չունեն եւ, որ իրենց կռիվը թուրքերի դեմ է, բայց վերջիններս չեն էլ լսում եւ հետզհետէ սպվարանալով՝ շրջապատում են Թորգոմի դիրքերը: Իսկ գնդապետ Բիկովը «անմիջապէս մարդ էր ուղարկել թիւրքաց զինուորների մօտ՝ ֆիդայիներին դիմաւորելու»[30]: Առավոտյան ժամը 7-ին, երբ հայտնվում են թուրքական զորամասերը, Որսորդ Գեւորգը հրամայում է կրակ բացել վերջիններիս ուղղությամբ: Սկսվում է հրաձգությունն ու հնչում են կռվի փողերը: Կռիվը հետզհետէ ուժգնանում է: Թուրքական զորքերը, տասնյակ զոհեր տալով, դիմում են փախուստի: Կեսօրին մոտ թուրքական զումարտակը նոր հարձակում է ձեռնարկում: Հայ մարտիկների թիկունքից սկսում են կրակել ռուս զինվորները՝ նեղելով հայ մարտիկներին: «Գնդապետ Բրկովը սերտ յարաբերութեան մէջ մտած էր թիւրք հրամանատարութեան հետ, - գրում է Անուշավան Դիլանյանը. - Հայակեր այդ սրիկան նախօրօք վճռել էր ոչնչացնել հայ յեղափոխական խումբը»[31]:

Արդէն ժամը 2-ի մոտ հայ մարտիկների վիճակը խիստ ծանրանում է: Թորգոմը

25« Ա. Ազնաւուրեանի յուշերը», «Հայրենիք» ամսագիր, յուլիս, 1938, թիւ 9, էջ 142:

26 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 25, թ. 3:

27 **Ռուբէն,** նշվ. աշխ., Ա. հատ., էջ 350, տե՛ս նաեւ **Մ. Վարանդեան**, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երեւան, 1992, էջ 241, տե՛ս նաեւ **Ի. Տէրտէրեան,** Հայկական զոյամարտը, ԵԺ, հատ. 6, Թեհրան, 1957, էջ 139, նաեւ **Գ. Լազեան**, Հայաստան եւ հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Գահիրէ, 1957, էջ 120, նաեւ **Լ. Չորմիսեան**, Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Բ. հատ., 1878-1908 թթ., Պէյրութ, տպարան «Սեւան», 1974, էջ 322:

28« **Արմէնի** յուշերը», 1945, թիւ 3, էջ 41:

29 «Որսկան» խմբի կռիւը Զարդանիսի մօտ, նա՛եւ «Յեղափոխական պայքար», հատ. 7, էջ 108:

30 «Որսկան» խմբի կռիւը Զարդանիսի մօտ, նա՛եւ «Յեղափոխական պայքար», հատ. 7, էջ 108-109, տե՛ս նաեւ **Հր. Սիմոնյան**, Անդրանիկի ժամանակը, երկու գրքով, Ա գիրք, Երեւան, 1996, էջ 211, տե՛ս նաեւ **Հ. Գեւորգյան**, Ազատագրական պայքարի հերոսապատումից, Երեւան, «Լուսակն» հրատ., 2006, էջ 359:

31 **Մ. Դիլանեան**, Թումանի խումբին հետ, «Հայրենիք» ամսագիր, դեկտեմբեր, 1939, թիւ 2, էջ 62:

որպես պատգամավոր գնդապետի մոտ է ուղարկում Լեւոն Քալանթարյանին: Բայց, առանց լսելու վերջինիս, Բրկովը հրամայում է զինաթափ անել եւ կալանավորել նրան: Հայ զինվորները շարունակում են կրակել միայն թուրքական զորքի ուղղությամբ, իսկ ռուսները, բարձրանալով լեռան կատարը, կրկին կրակի տակ են առնում հայկական մարտախումբը, որը դժոխային կացության մեջ է հայտնվում: Թուրք զինվորները, օգտվելով առիթից, քայլ առ քայլ, դիրք առ դիրք մոտենում են հայ մարտիկներին: Թորգոմը որպես պատգամախոս այս անգամ Բրկովի մոտ է ուղարկում Անուշավան Դիլանյանին, որին նույնպես զինաթափում եւ բանտարկում են[32]: Այս նույն ժամանակ ռուսական մեկ այլ գունդ միանում է Բրկովի զորամասին եւ առավել ուժգին կրակ տեղում հայ մարտիկների թիկունքին: Թորգոմն ուղարկում է երրորդ պատգամախոսին, որը մի հայ քահանա էր Տեր-Ղազար անունով: Այս անգամ գնդապետի հրամանով վերջինս սպանվում է դեռ տեղ չհասած[33]: Քահանայի սպանությունը շատ ծանր տպավորություն է թողնում խմբի մարտիկների վրա: Նրանք պահանջում են փոխադարձ կրակ բանալ ռուս զինվորների ուղղությամբ, բայց խմբապետ Թորգոմը արգելում է: Նա հրամայում է. «Ոչ մի գնդակ չարձակել, թէկուզ նրանք բոլորիս էլ գնդակահարեն»[34]: Համոզվելով, որ հայ մարտիկները իրենց ուղղությամբ կրակ չեն բացի, ռուս զինվորներից մոտ 800 հոգի իջնում են ձորը: «Եթէ ուզէինք, մենք կարող էինք նրանց բոլորին հրացանազարկ անել, - գրում է Արմենը, - նոյնիսկ կարող էինք քարերով կոտորել»[35]: Այս ընթացքում շրջապատման մեջ հայտնված Տեր-Ղազարի տասնյակը Պաղվալի Վաղոյի գլխավորությամբ կարողանում է ճեղքել պաշարման շղթան եւ կռվելով մինչեւ վերջին շունչը՝ բոլորն էլ ընկնում են հերոսի մահով[36]: Երեկոյան ժամը 6-ին Թորգոմը ռուս գնդապետի մոտ է ուղարկում 4-րդ պատգամախոսին՝ Արմենին, որին նույնպես բանտարկում են: Տեսնելով, որ Արմենն էլ չի վերադառնում՝ Թորգոմն այս անգամ դիմում է վերջին միջոցին՝ 10-15 մարտիկներով առանց զենքի, անձնատուր լինելու նպատակով մոտենում է ռուսական դիրքերին, ռուսները գնդապետի հրամանով թողնում են, որ Թորգոմի տասնյակը բավականաչափ մոտենա, իսկ այնուհետեւ կրակ են բացում նրանց ուղղությամբ եւ բոլորին կոտորում[37]: Թորգոմի երկու տասնյակից կենդանի մնացած մարտիկները «դուրս են գալիս դիրքերից եւ զանազան կողմեր փախչում. ոմանք գնդակահար ապանում են, ոմանք՝ վիրաւոր բռնվում, իսկ ոմանք էլ, փախչելով անտառ, ազատւում են»[38]:

Այս ընթացքում Որսորդ Գեւորգի գլխավորած երկու տասնյակը շարունակում է կռվել թուրք զինվորների դեմ, որոնք, սրտապնդվելով ռուս «եղբայրների» օգնությունից, ավելի հանդուգն գրոհ են ձեռնարկում եւ երկու կողմից շրջապատում են Որսորդ Գեւորգի

32 Տեմ անդ:

33 Տեմ ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 25, թ. 3, տեմ նաեւ «Արմէնի յուշերը», էջ 45:

34 «Արմէնի յուշերը», էջ 45:

35 Անդ:

36 Տեմ **Ն. Գեւորգյան**, նշվ. աշխ., էջ 362:

37 Տեմ «Որսկան» խմբի կռիւը Զարդանիսի մօտ, տեմ նաեւ «Յեղափոխական ալպոմ», հատ 2, Հալէպ, 1958, էջ 201:

38 «Որսկան» խմբի կռիւը Զարդանիսի մօտ:

մարտիկներին: «Ռուսորդը, նկատելով, որ այլեւս անհնարին է շարունակել դիմադրութիւնը՝ հրամայում է դուրս գալ դիրքերից եւ փախչելով ազատուել կամ գոնէ ընկնել ռուսների ձեռքը. կարծելով, թէ նրանք կը խնայեն իրենց»[39], - հիշում է խմբի անդամներից մեկը: Շարունակելով կռվել՝ Ռուսորդ Դեւորգը իջնում է ձորը, ուր ուզում է անձնատուր լինել մի ծանօթ ռուս զինվորի, բայց սպանվում է նույն զինվորի ձեռքով: Մի այլ հայդուկի՝ Սարգիս Մխչյանին, ռուսները բռնում ու հանձնում են թուրքերին, որին վերջիններս մորթում են[40]: Երեկոյան ժամը 7-8-ը ռուս-թուրքական զորամասերը գրաւում են հայ մարտիկների վերջին դիրքերը: Հնչում են փողերը, իսկ այնուհետեւ ռուս եւ թուրք զինվորները կոնյակով նշում են իրենց «հաղթանակը»՝ միաժամանակ չմոռանալով թալանել զոհված հայ մարտիկների դիակները՝ բոլորովին մերկացնելով նրանց, իսկ վիրավորներին սպանում են[41]: Բլկովի զորքի այս այլանդակությունների մասին «Դրոշակ» թերթը գրում է. «Օլթիի շրջանից սահմանապահ զինուորները ու կօզակները բաւական չէ, որ կողոպտել են «Ռուսորդ» խմբի նահապակների դիակները՝ բոլորովին մերկանդամ ձգելով նրանց, այլեւ այդ բարբարոսութիւնները գործ են դրել նաեւ դիակների վրայ՝ որի գլուխն են ջարդել, որի թեւը կտրել, որի աչքերը փորել...»[42]: Այս քայլով «ռուս կառաւարութիւնը ցոյց տուեց աշխարհին, թէ գազանային, պաղարիւն, անամօթ, սրտոր վարմունքի մէջ նա ընդունակ է ոչնչով յետ չմնալ արիւնարբու տաճիկներից»[43]:

Ահա՛, այսպիսի սարսափելի վախճան է ունենում 1904 թ. ռուս-թուրքական սահմանն անցած ՀՅԴ վերջին խումբը: «Ռուսկան» խմբից սպանվում են 32, վիրավորվում՝ 6, ձերբակալվում եւ բանտարկվում՝ 14, իսկ փախչելով ազատվում՝ 9 հոգի[44] (ըստ Վ. Վալադյանի՝ փախչելով ազատվում են 12 հոգի[45], իսկ ըստ Ա. Ազնավուրյանի՝ կենդանի են մնում միայն 12 հոգի[46]): Խմբի ձերբակալված անդամներին 5-6 ամիս բանտում պահելուց հետո ազատ են արձակում:

Որեւէ կասկած լինել չի կարող, որ եթե հայդուկները ռուս զինվորների հանդեպ չդրսեւորեին ծայրահեղ գթասրտություն ու հարգալից վերաբերմունք եւ համարժեք պատասխան տային նրանց գործողություններին, ապա զոհերն անհամեմատ քիչ կլինեին: Այս բանը խոստովանել են նաեւ իրենք՝ ռուս զինվորները: Այսպես, մի ռուս զինվոր խոստովանել է, որ. «Եթէ հայերը կամենային, մեզ բոլորիս էլ կը կոտորէին, բայց նրանք մի հատ գնդակ էլ չարձակեցին մեզ վրայ»[47]: Իսկ երբ ռուս սպաներից մեկը շրջանային

39 Անդ:

40 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 25, թ. 4:

41 Տե՛ս «Ռուսկան» խմբի կռիւը Զարդանիսի մօտ, տե՛ս նաեւ **Էդ. Ակնունի**, Դէպի կռիւ, Ժընեւ, 1904, էջ 264, տե՛ս նաեւ «Արմէնի յուշերը», էջ 45, տե՛ս նաեւ **Վ. Վալադեան**, Սեւքարեցի Սաքօն. «Հայրենիք» ամսագիր, յուլիս, 1959, թիւ 7, էջ 76, **Գ. Լազեան**, Հայաստան եւ հայ դատ, էջ 121:

42 «Դրօշակ», սեպտեմբեր, 1904, թիւ 9, տե՛ս նաեւ ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 25, թ. 4, «Հայրենիք», ազգային շաբաթաթերթ, Բոստոն, հոկտեմբերի 29, 1904, թիւ 277:

43 ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 25, թ. 4:

44 «Ռուսկան» խմբի կռիւը Զարդանիսի մօտ:

45 Տե՛ս **Վ. Վալադեան**, Սեւքարեցի Սաքօն, «Հայրենիք» ամսագիր, յուլիս, 1959, թիւ 7, էջ 76:

46 Տե՛ս Ա. Ազնաւուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, յուլիս, 1938, թիւ 9, էջ 142:

47 «Ռուսկան» խմբի կռիւը Զարդանիսի մօտ, «Դրօշակ», օգոստոս, 1904, թիւ 8, տե՛ս նաեւ **Սիմոնյան Հր.**,

տեսուչին պատմում է, թե հայ մարտիկները ռուս զինվորների դեմ կռվել են քաջաբար, բայց իրենք (ռուսները) ոչ մի զոհ չեն տվել, տեսուչը, որը ճանաչում էր Ռոսորդ Գեւորգին, պատասխանում է. «Եթէ հայերը կռուած լինէին ձեր դէմ, միայն սրա (Ռոսորդ Գեւորգի) գնդակից ձեզանից մի հարիւր հոգի կ՚ընկնէր: Ինչպէս երեւում է, դուք ճիշտ չեք պատմում»[48]:

Նշենք, որ 1903 թ. մայիսի 25-ից մինչեւ 1904 թ. հոկտեմբերի 29-ը Հ. Յ. Դաշնակցությունը Երկիր է ուղարկել 11 հայդուկային խումբ, որոնցում ընդգրկված էին 431 ֆիդայի (133-ը՝ հեծյալ), որոնցից զոհվել է 200 հոգի՝ թշնամուն պատճառելով 700 զոհ[49]:

«Ռոսկան» խմբի այս տմարդի բնաջնջումը ցնցեց հայության բոլոր խավերին: Վրդովմունքը անսահման էր ռուսական իշխանության դեմ: «Ամէն կողմից «վրէժ», «վրէժ» էր լսում ու հատուցում պահանջում թանկագին զոհերի արեան համար»[50]:

Այս դեպքը լուրջ քննարկումներ է առաջ բերում նաեւ ՀՅԴ շարքերում: Մասնավորապես քննության է առնվում այն հարցը, թե ինչպիսին պետք է լինի հայ մարտիկների դիրքորոշումը նման դեպքերում: «Անշուշտ, կային մեծ թուով Թ-ումանի քաղաքականութեան կողմնակիցներ, - գրում է Արմենը, - բայց մեծամասնութիւնը, մանաւանդ երիտասարդութեան մէջ, հակառակ էր դրան»[51]: Մեծ էր վրդովմունքը հատկապես Կարսի մարզում, որտեղ «Ամէնքի խօսակցութեան նիւթը Թ-ումանի խմբի կոտորածն էր: Եւ քիչ չէր թիւը այն երիտասարդների, որոնք առանց Մարմինների հրահանգին, ինքնաբեր որոշումով այս ու այն ծանօթ դաշնակցականին էին դիմում՝ թոյլ տալու իրենց, որ Բրկովին ահաբեկեն եւ Թ-ումանի ու նրա խմբի վրէժը լուծեն»[52], - գրում է Ա. Ազնավուրյանը:

1904 թ. հուլիսի կեսերին դեպքի առնչությամբ ՀՅԴ Արեւելյան բյուրոն Թ-իֆլիսից շտապ կարգով Կարս է ուղարկում Սեւքարեցի Սաքոյին (Սարգիս Ծովանյան): Սաքոյի ու ՀՅԴ «Ջրաբերդ» կենտրոնական կոմիտեի անդամների մասնակցությամբ տեղի է ունենում մի խորհրդակցություն, որը որոշում է. «Թ-ումանի եւ իր խումբի վրեժը առնել թէ ռուսներէն եւ թէ տաճիկներէն»[53]: Գնդապետ Բրկովին ահաբեկելու որոշումը Կարսի ՀՅԴ «Ջրաբերդ» կենտրոնական կոմիտեն կայացնում է միաձայն: «Բոլոր եօթ անդամները կատարելապէս համերաշխ էին դրա մասին, - գրում է Վալադ Վալադյանը, - միայն թէ՝ նրանք լրիւ համամիտ չէին գտնուել այն մասին, թէ ով պիտի լինէր որոշուած ահաբեկումը կատարողը»[54]: Իսկ թուրքերի հանդեպ վճռվում է. «Կազմել խումբ մը՝ բաղկացած եօթ հոգիէ, որոնք միայն տասնոց ատրճանակներով եւ ռումբերով զինուած պիտի գնային եւ ծածուկէն մօտենային տաճկական զօրանոցներուն եւ մութ գիշերով պատու-

Անդրանիկի ժամանակը, Ա. գիրք, էջ 213:

48 **Արմէնի** յուշերը, «Հայրենիք» ամսագիր, մայիս-յունիս, 1945, թիւ 3, էջ 49:

49 «Հայրենիք», ազգային շաբաթաթերթ, յունուարի 7, 1905, թիւ 287:

50 «Յեղափոխական պայքար», հատ. 2, Հալէպ, 1958, էջ 201:

51 **Արմէնի** յուշերը, «Հայրենիք» ամսագիր, յուլիս-օգոստոս, 1945, թիւ 4, էջ 76:

52 **Ա. Ազնաւուրեանի** յուշերը, «Հայրենիք» ամսագիր, յուլիս, 1938, թիւ 9, էջ 142:

53 **Ռուբէն**, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 354:

54 **Վ. Վալադեան**, Սեւքարեցի Սաքօն, էջ 76:

հանուերէն ներս պիտի նետէին ռումբերը»[55]: Այս ծրագրի իրագործումը նախ հանձնարարվում է Տուրբախին, բայց հետո այն հանձն է առնում իրագործել Ամերիկայից եկած Հարությունը, որը «դժոխային մեքենաներ եւ ռումբեր պատրաստելու եւ գործածելու մասնագէտ էր»[56]:

Խումբը անցնում է սահմանը, ռումբերով հարձակվում թուրքական զորանոցների վրա եւ վնասներ պատճառում, բայց ոչ ակնկալվածի չափ, քանի որ. «որոշուած էր հիմնայատակ ընել եւ բոլորովին ոչնչացնել զօրանոցները»[57], որն ամբողջությամբ չի իրագործվում:

Ինչեւէ, վրեժը մասամբ լուծված էր թուրքերից: Բայց Թ-ումանի խմբի սպանդի գլխավոր մեղսակիցը՝ գնդապետը, դեռեւս ողջ էր: Ինչպես նշվեց, նրան սպանել ցանկացող երիտասարդների թիվը շատ մեծ էր, բայց «Ջրաբերդ» կենտրոնական կոմիտեն դեռ չէր որոշել, թե ում հանձնարարի այդ պատասխանատու գործը, որը ոչ մի կերպ չէր կարելի ձախողել: Այս առնչությամբ Կարսի ՀՅԴ Կ. կոմիտեին է դիմում նաեւ 19-ամյա մի երիտասարդ՝ Համո Ջանփոլադյանը: Համոն ուներ այն առավելությունը, որ լավ ծանօթ էր Օլթիին եւ անձամբ ճանաչում էր գնդապետին ու, ինչպես ինքն էր ասում. «կարող էր այդ գազանին հենց իր բնակարանում սպանել»[58]: Տեսնելով երիտասարդի աներեր կամքը՝ Կարսի ՀՅԴ Կ. կոմիտեն համաձայնում է Բիկովի սպանությունը հանձնարարել նրան, եթե ՀՅԴ հայտնի գործիչներից երկուսի երաշխավորությունը ստանա: Վերջինս համաձայնում է եւ մեկնում Ալեքսանդրապոլ՝ ստանալու Ա. Ազնավուրյանի համաձայնությունը: «Երբ ինձ ներկայացաւ եւ իր ցանկութիւնը պարզեց ու յայտնեց նաեւ Կարսի Կ. կոմիտէի վերոյիշեալ հրահանգը, ես զգացի, որ Հմայեակը բոլոր փուռեալներն ունէր Բրկովի ահաբեկման գործը գլուխ բերելու»[59], - հիշում է Ա. Ազնավուրյանը: Ստանալով Արամայիսի համաձայնությունը՝ Համոն այնուհետեւ գնում է Կարս՝ Սեւքարեցի Սաքոյի մոտ՝ նրա համաձայնությունը եւս ստանալու: Սաքոն «անվարան որոշում է այդ անփորձ երիտասարդին յանձնել գործը՝ պատասխանատուութիւնը իր վրայ վերցնելով»[60]: Ստանալով Արամայիսի ու Սաքոյի համաձայնությունը՝ Համոն անմիջապես անցնում է գործի: Նա «երեսը մրոտած, մազերը զգզգած, ոտքերին եամանի հագած, պատռուած հագուստներով ծխնելոյզ մաքրողի կերպարանքով մէն-մինակ կը հասնի Օլթի»[61]:

Այստեղ, սակայն, պարզվում է, որ այդքան էլ հեշտ գործ չի Բրկովին ահաբեկելը, քանի որ վերջինս կռահելով, որ «յօշոտուած հայերի ընկերները վրէժխնդիր պիտի լինէին»՝ ձեռք է առնում ամեն զգուշական միջոց՝ վտանգից խուսափելու համար: Ելնելով

55 **Ռ-ուբէն**, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 354:

56 Անդ:

57 Անդ:

58 **Հայ Գուսան**, Հմայեակ Ջանփոլադեան (Համօ), «Դրօշակ», նոյեմբեր-դեկտեմբեր, 1912, թիւ 11-12, նաեւ «Հմայեակ Ջանփոլադեան (Համօ)», գրեց՝ **Աւետիք Իսահակեան.** «Հայրենիք» ամսագիր, յունուար, 1962, թիւ 1, էջ 75, նաեւ «Յեղափոխական ալբոմ», հատ. 3, Հալէպ, 1960, էջ 62:

59« Ա. Ազնաւուրեանի յուշերը», էջ 142:

60 **Վ. Վալադեան**, Սեւքարեցի Սաքօն, « թիւ 7, էջ 77:

61 **Ռ-ուբէն**, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 354:

զգուշությունից՝ նա «սահմանափակում է իր պաշտօնական պտոյտները գաւառի կեդրոնատեղին եղող Օլթիից դուրս եւ ամփոփում է պստիկ (փոքր) մի տարածութեան մէջ, որով իր պաշտօնապատուն ու միաժամանակ բնակարանը կապում էր մօտակայ գինուորական ակումբի հետ»[62], որը մի քանի քայլ էր հեռու զորանոցից: Համոն մի քանի օր ուսումնասիրում է գնդապետի երթեւեկությունը, եւ երբ 1904 թ. օգոստոսի 31-ի (ն. կ. սեպտեմբերի 13) երեկոյան ժամը 8-ին Բրկովը ակումբ գնալու նպատակով դուրս է գալիս զորանոցից՝ Համոն որսորդական հրացանով գնդակահարում է նրան իր թիկնապահ կազակի աչքի առաջ[63]: Չզոհանալով այդքանով՝ Համոն եւս երեք գնդակ է արձակում Բիկովի գլխին, իսկ այնուհետեւ, մինչեւ զինվորները, սպաներն ու ոստիկանները իրար են անցնում, Համոն կարողանում է դիմել փախուստի: Այսպիսով, իր արդար դատաստանին է արժանանում նաեւ Թորգոմի «Ուրսկան» խմբի ջախջախման գլխավոր մեղսակիցը: Այս սպանությունը անհուն բերկրանք է պատճառում ողջ հայությանը՝ միաժամանակ լայն արձագանք գտնելով մամուլի էջերում: «Հայրենիք» շաբաթաթերթում այս մասին կարդում ենք. «Մի գեղեցիկ օր, երբ նա (Բրկովը - Կ. Հ.) պատրաստում էր տանից դուրս գալ, վրէժխնդիր դաշոյնը ցցուեց սրտին, եւ ցոյց տուեց արար աշխարհին, թէ եթէ Պիքով գիտէ սպաննել հայ հայդուկներին, հայ հայդուկի ողջ մնացող ընկերներն էլ գիտեն շան սատակ անել Պիքովին: Ուրեմն թող միանգամ ընդմիշտ հանգստանան մեր նահատակ ընկերների ոսկորները»[64]: Իսկ «Դրոշակ»-ը ավելացնում է. «Տպաւորութիւնը մէծ է ամէն տեղ: Ժողովրդի վրէժի արդար արտայայտութիւնն էր այդ»[65]: Դեպքի արձագանքը նույնն էր ինչպես հայկական, այնպես էլ օտար մամուլի մյուս օրգաններում:

Համոն վերադառնում է Կարս եւ Սեւքարեցի Սաքոյին զեկուցում, որ գործը հաջողությամբ իրագործված է: Սաքոյի հրահանգով Համոն Կարսից անցնում է Թիֆլիս, քանի որ ռուսական ժանդարմերիան քրեական գործ էր հարուցել Բրկովի սպանության առթիվ եւ շատ լուրջ կասկածներ ուներ, որ այն կարող էին իրականացնել հայ հեղափոխականները, ուստի Կարսի մարզում. «իրար յաջորդեցին խուզարկութիւն, հարցաքննութիւն, հետապնդում, հալածանք՝ կասկածելի անձանց վերաբերմամբ»[66]: Կարսի մասնավոր բնակարաններում սկսում է թաքնվել նաեւ Սեւքարեցի Սաքոն. «դրսում նա քիչ էր յայտնւում եւ ապրում էր երեւութապէս առանձնութեան մէջ, - գրում է Վ. Վալադյանը, - բայց եւ այնպէս, ոստիկանութեան գործակալները հոտ էին առել, որ այդ լռիկ ու մնջիկ եկուորը պարապ տեղը չէր այցելել Կարս»[67]: Կարսում մնալն արդեն վտանգավոր էր, եւ ընկերների պահանջով 1904 թ. սեպտեմբերի սկզբին Սաքոն եւս Կարսից հեռանում է Թիֆլիս: Շուտով Կարսից հեռանում են նաեւ Ռուբեն Տեր-Մինասյանն ու Արամ Մանուկյանը, բայց այլ կապակցությամբ: Արշավախմբերի ջախջախումը խորը հոգեկան տառապանք էր պատճառել Արամին: Հետագայում նա այդ մասին գրել է. «Խիղճս ինձ

62 **Վ.Վալադեան**, Սեւքարեցի Սաքօն, էջ 78:
63 Տե՛ս «Հայրենիք», ազգային շաբաթաթերթ, նոյեմբերի 5, 1904, թիւ 278:
64 Անդ, հոկտեմբերի 29, 1904, թիւ 277:
65 «Դրօշակ», հոկտեմբեր, 1904, թիւ 10:
66 **Վ. Վալադեան**, Սեւքարեցի Սաքօն, էջ 79:
67 Անդ:

փանջում էր, որ ամէնքը գնացին ու նահապակուեցին, իսկ ես, կարծես մի խորամանկութեամբ յետ մնացի»[68]: Այս ապրումները Արամին սրիպում են մեկընդմիշտ հեռանալ Կարսից: Նա Մանազկերտցի Մոսոյի հետ նախ անցնում է Թիֆլիս՝ ՀՅԴ Արեւելյան բյուրոյից վերջին հրահանգները ստանալու եւ Սասուն անցնելու համար: Բայց Սասունի ապստամբությունն արդեն պարտված էր, իսկ հայդուկները հեռացել էին Սասնո լեռներից եւ Մշո դաշտում կռիվներ մղելով՝ շարժվում էին դեպի Վան, ուստի ՀՅԴ Արեւելյան բյուրոյի որոշմամբ Արամը լիազոր գործչի հանգամանքով գործուղվում է Վան:

Բայց Կարսի գծով Երկիր անցնելը վտանգավոր էր, քանի որ. «Կարսի սահմանագլխի դէպքերը փճացրել էին մեր յարաբերութեան բոլոր գծերը: Համարեա ամբողջ գծի վրայ եղած կազմակերպութիւնները քայքայուել էին գործիչների նահապակութեան կամ ձերբակալման պատճառով»[69]: Ուստի որոշվում է, որ Արամը Վան անցնի Պարսկաստանի գծով: Արամը այդպես էլ վարվում է: Նրա համար պարզ էր դարձել, որ անհնարին է զինապար խմբերով որեւէ լուրջ օգնություն ցույց տալ արեւմտահայությանը: Արշավախմբերի հանդեպ նրա այս գաղափարները ավելի հստակ կերպով արտահայտվում են ՀՅԴ IV ընդհանուր ժողովում, երբ քննարկվում է արշավախմբերի խնդիրը: Այս հարցին մենք դեռ կանդրադառնանք: Նշենք, որ Արամից առաջ Վան անցած Իշխանը (Նիկողայոս Պողոսյան-Միքայելյան) եւս Օննիկ Նեւրուզի (Հովհաննես Նեւրուզյան) «Ծանթ» զինապար խմբի ջախջախումից հետո կտրուկ փոխել էր իր դիրքորոշումը արշավախմբերի նպատակահարմարության վերաբերյալ: «Ճամբու մէկ տասերորդը չկտրած, թշնամին առնուազն մեր վրայ 5000-10.000 զինուոր գցեց: Այդքան էլ ճամբաները կը սպասէին: Այդքան ալ պահեստի ունէր, երեւի: Արդ՝ զինուած խմբերով Սասուն հասնիլ չի լինի, իսկ այնտեղէն ալ դուրս գալը հրաշք պիտի լինի: ...Փորձը ցոյց տուեց, որ այս ճանապարհով եւ այն ալ զոռով՝ մեր ծրագրածները իրագործել անհնարին է»[70], - ասել է Իշխանը:

Արշավախմբերի մասին այս գաղափարը հետզհետե տիրապետող էր դառնում հայ ազատագրական պայքարի գործիչների շրջանում: Չնայած, որ Նիկոլ Դումանը (Նիկողայոս Հովհաննիսյան) անձամբ էր գլխավորում դեպի Սասուն ուղեւորվող արշավախմբերից մեկը (Սալմաստից), բայց նա միանշանակ բացասական վերաբերմունք ուներ արշավախմբերի կազմակերպման գործի հանդեպ՝ գտնելով, որ ստեղծված պայմաններում, երբ ամբողջ Երկիրը լցված էր թուրքական զորքերով ու քրդական աշիրեթներով, արշավախմբերի՝ նպատակակետին հասնելու հնարավորությունը շատ չնչին է: Ուստի առաջարկում էր այլեւս ոչ մի արշավախումբ չուղարկել Երկիր[71]: Նշենք նաեւ, որ դեռեւս 1903 թ. Քրիստափոր Միքայելյանն իր անհանգստությունն էր հայտնել արշավախմբերի կազմակերպման կապակցությամբ՝ թերահավատորեն մոտենալով նրանց՝ իրենց նպատակին հասնելու հավանականությանը[72]: Այս նույն ժամանակ անդրադառնալով արշավախմբերին եւ զինապար խմբերին՝ «Ձայն հայրենեաց» թերթը գրում է.

68« Արամի յուշերը», Արամը (մահուան յիսնամեակին առթիւ), Երեւան, 1991, էջ 153:
69 Անդ, էջ 154:
70 **Ռուբէն**, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 172:
71 Տես **Ն. Գեւորգյան**, նշվ. աշխ., էջ 324-325:
72 Տես **Վ. Վալադեան**, «Մրրիկ» խմբի արշաւ. «Հայրենիք» ամսագիր, յունիս, 1958, թիւ 6, էջ 51:

«Դուրսէն գացող խումբեր միայն այն ատեն կրնան օգտակար բլլալ, երբ արդէն Երկրին մէջ կռուի ամէն պատրաստութիւններ եղած են ու կռիւն սկսած է. ատկէն դուրս որեւէ խլրտում, որեւէ շարժում եւ որեւէ խումբի ուղարկում պաշտօնական ու կիսապաշտօնական օրկաններու մէջ ու բեմերու վրայէն ոճիր մը, դաւաճանութիւն մրն է յեղափոխութեան ու հայրենիքի շահերուն դէմ»[73]:

Արշավախմբերի հանդեպ նման մոտեցումն իր ատացոլումն է գտնում նաեւ ՀՅԴ շրջանային, իսկ այնուհետեւ նաեւ IV ընդհանուր ժողովում: Այսպես, 1904 թ. հուլիսի 25-26-ը Թիֆլիսում կայացած ՀՅԴ Արեւելյան բյուրոյի արտակարգ ռայոնական ժողովը որոշում է. «Երկրի ներսը ուղարկել ինչ ճանապարհներով, որ կարելի կը լինի՝ ռազմամթերք ու կարող անհատներ»[74]: Ինչպես տեսնում ենք, այստեղ խոսքը միայն զինամթերքի ու անհատ գործիչների, բայց ոչ արշավախմբերի կամ զինատար խմբերի մասին է, ինչը ստեղծված պայմաններում միանգամայն ընդունելի է: Արշավախմբերի վերաբերյալ ՀՅԴ հետագա դիրքորոշումը ավելի հստակ ուրվագծվում է 1904 թ. սեպտեմբերի 15-ին Թիֆլիսում գումարված արտակարգ «ռայոնական» ժողովում, որն այս մասին որոշում է. «Քաղաքական պայմանները ի նկատի ունենալով՝ խումբ չուղարկել, բայց սահմանի վրայ դինամիտով ցոյցեր անել, եւ ռազմամթերք ու այլ նիւթեր հասցնել Երկրի ընկերներին՝ Վրէժստանի (Ատրպատականի - Կ. Հ.) զծով»[75]: Փաստորեն, Թիֆլիսի արտակարգ ռայոնական ժողովը առժամանակ հրաժարվում է Կարսի զծով Երկիր նույնիսկ զինամթերք ուղարկելու գաղափարից: Եթե հաշվի առնենք արշավախմբերի ձախողման հետեւանքով ռուս-թուրքական սահմանամերձ շրջաններում 1904 թ. կեսերին ստեղծված իրավիճակը, ապա այդ որոշումը միանգամայն հասկանալի է դառնում: Իսկ 1905 թ. ապրիլին Ժնեւում կայացած ՀՅԴ Խորհրդի II գումարման ժամանակ մասնակիցների մի խումբ (Սաֆո՝Մարտիրոս Մարգարյան, Ղարիբ՝Ավետիս Ահարոնյան, Միքայել Վարանդյան, Համո Օհանջանյան եւ Լորիս Մելիքյան) խիստ քննադատության է ենթարկում արշավախմբերի եւ զինատար խմբերի կազմակերպման գործը՝ մատնանշելով այդ խմբերի՝ նպատակին չհասնելը: Այս առումով հետաքրքիր է նաեւ 1906 թ. նոյեմբերի 28-30-ը կայացած Կարսի ՀՅԴ շրջանային ժողովի՝ արշավախմբերի մասին կայացրած որոշումը. «Դաշնակցութիւնը այլեւս իր նախկին տակտիկային չդիմէ՝ խմբեր չուղարկէ, ապա թէ ոչ Հայաստանում հայ չի մնայ...»[76]: Արշավախմբերի փոխարեն ժողովը կարեւորում է. «ինքնապաշտպանողական գաղափարը մտցնել ժողովրդի մէջ եւ ինքնապաշտպանողական խմբեր պատրաստել ապագայ չարիքների համար»[77]:

Արշավախմբերի հարցին լայնորեն անդրադառնում է 1907 թ. փետրվարի 22-ից մայիսի 4-ը Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում կայացած ՀՅԴ IV ընդհանուր ժողովը: Ժողովի՝ ապրիլի 8-ին կայացած 73-րդ նիստում Արամ Մանուկյանը մի լայն զեկուցագիր է կարդում արշավախմբերի մասին՝ նշելով դրանց ձախողման պատճառները՝ 1.

73 «Ձայն հայրենեաց», ազգային-գրական եւ քաղաքական շաբաթաթերթ, Բոստոն, 1903, թիւ 229:
74 «Նիւթեր...» Բ. հատ., էջ 201:
75 Անդ, էջ 202:
76 «Նիւթեր...» Ե. հատ., խմբ. Ե. Փամպուքեանի, Պէյրութ, 2007, էջ 147:
77 Անդ:

Խմբերի կազմաւորման համար չեն եղել ազատ վայրեր: 2. Խմբերի մեծ մասն, ի տարբերություն հակառակորդի, անծանօթ են եղել Երկրի ճանապարհներին եւ ուղիներին: 3. Ի տարբերութիւն խմբերի՝ հակառակորդն ունեցել է պասնապատիկ ավելի ուժեր: 4. Թ-շնամին անընդհատ համալրել է իր ուժերը, ինչից զուրկ են եղել Երկիր անցնող խմբերը: Այս պատճառով խմբերը մեծ մասամբ ձախողվել են, իսկ լավագույն դէպքում՝ կորուստներ տալով հետ են վերադարձել, որի արդիւնքում՝ 1. ՀՅԴ-ն տվել է մարտական եւ գաղափարական գործիչների ու ֆինանսական միջոցների կորուստ: 2. Թ-շնամու ձեռքն են ընկել ռազմամթերք եւ այլ հարստություն: 3. Սահմաններում զինվորական վիճակ ստեղծելով՝ դժվարացել է երթեւեկությունը: 4. Վտանգվել է Երկրի գործը:

Ելնելով այս պատճառներից՝ Արամն առաջարկում է հրաժարվել նոր արշավախմբերի գաղափարից: Այս առաջարկը բուռն քննարկում է առաջացնում նիստի մասնակիցների շրջանում: Հնչում են թեր ու դեմ կարծիքներ: Արամի հետ համաձայնում են Ավետիք Իսահակյանը (Հայ Դ-ուսան[78]) եւ Համո Օհանջանյանը: Այս խմբին հակադրվում են Ռուբեն Զարդարյանը, Թ-ովմաս Ջելալյանը, Վահագն Տաթեւյանը, որոնց կարծիքով արշավախմբերը ձախողվել են միայն վատ պատրաստված լինելու պատճառով, եւ առաջարկում են նոր խմբեր կազմավորել, բայց չուղարկել, այլ «պատրաստել ու կեդրոնացնել, որոնք կարողանան հարկաւոր եղած րոպէին անյապաղ Երկիր մտնել»[79]: Մասնակիցների մի այլ խումբ (Ռոստոմ՝ Ստեփան Զորյան, Ստեփանյան՝ Սարգիս Մինասյան) ընդունելով տվյալ ժամանակաշրջանում արշավախմբերի աննպատակահարմարությունը՝ միաժամանակ գտնում է, որ չպետք է հրաժարվել արշավախմբերի կազմավորման գաղափարից՝ այն թողնելով առավել նպաստավոր ժամանակների: Ի վերջո, նիստը որոշում է հարցի քննարկումը փոխադրել այլ նիստի, երբ ներկա լինեն այդ գործին քաջատեղյակ այլ ընկերներ եւս: Հարցի քննարկումը վերսկսվում է 3 օր անց՝ ապրիլի 11-ին՝ ժողովի 77-րդ նիստում: Քննարկմանը մասնակցում են Սեւքարեցի Սաքոն, Սեպուհը (Արշակ Ներսիսյան), Չոփուրյանը (Լեւոն Թ-ադեւոսյան), Սիմոն Զավարյանը, Ավետիք Իսահակյանը, Հակոբ Զավրիյանը (դոկտոր Զավրիեւ), Ռոստոմը, Սեբաստացի Մուրադը (Մուրադ Խրիմյան-Հակոբյան), Սարգիս Մինասյանը, Եղիշե Թ-ոփչյանը, Արշակ Վռամյանը (Օնիկ Դ-երձակյան):

Սեւքարեցի Սաքոն գտնում է, որ չպետք է հրաժարվել արշավախմբերից, բայց նաեւ նշում է, որ արշավախմբերը միայն սահմանագլխի վրա պետք է կռվեն ու հարձակողական մարտեր մղեն: Սեպուհը, համաձայնելով այս տեսակետին, միաժամանակ գտնում է, որ զինատար խմբերից անհրաժեշտ է հրաժարվել, քանի որ վերջիններս իրենց չեն արդարացրել: Մուրադն այն կարծիքն է հայտնում, որ արշավախմբերն անհրաժեշտ են, բայց խմբի անդամները պետք է ռազմական կրթություն ունենան: Այս կարծիքի հետ համաձայնում են նաեւ Ռոստոմն ու Սիմոն Զավարյանը: Արամ Մանուկյանը, Համո Օհանջանյանն ու Ավետիք Իսահակյանը պաշտպանելով իրենց նախորդ տեսակետը՝ գտնում են, որ պետք է խսպառ հրաժարվել արշավախմբերի կազմավորման գաղափարից:

78 Ավետիք Իսահակյանի ՀՅԴ կուսակցական ծածկանունը:

79 «Նիւթեր...», Գ. հատ., խմբ. Հր. Տասնապետեանի, Պէյրութ, 1976, էջ 197:

Նրանց է միանում նաեւ Հակոբ Զավրիյանը: Սարգիս Մինասյանն ու Արշակ Վռամյանը պաշտպանում են նախորդ ընդհանուր ժողովի որոշումները՝ գտնելով, որ արշավախմբերն անհրաժեշտ են Երկրի շարժումներին արձագանք տալու եւ թուրքական ուժերն իրենց վրա քաշելու տեսանկյունից:

Երկար քննարկումներից հետո ՀՅԴ IV ընդհանուր ժողովը արշավախմբերի մասին ընդունում է հետեւյալ բանաձեւը. «Ապագայում Թ-իւրքահայաստանում մեր մղելիք կռուի մէջ այլեւայլ յեղափոխական ձեռնարկների հետ միասին արշաւախմբերը եւս օգտակար կարող են լինել, երբ ներսի վարիչ մարմինները վստահ են, որ դա կռիւը կը դարձնէ ազդու, լայն եւ յարատեւ: Միջոցներ ձեռք առնել առանց վարձի, մարտական դաշնակցական խմբերը մարզելու ապագայ գործողութիւնների համար»[80]:

Անդրադառնալով արշավախմբերի ձախողման պատճառներին՝ IV ընդհանուր ժողովի պատգամավոր Ստեփանյանը նշել է, որ նրանց ձախողման գլխավոր պատճառը քրդերն են, եւ անհրաժեշտ է հայ-քրդական համագործակցություն հաստատել: Մեր կարծիքով, թեեւ ճիշտ է այն հանգամանքը, որ արշավախմբերի ձախողման գործում իրենց դերն են խաղացել քրդերը, բայց այդ հարցում քիչ դեր չի խաղացել նաեւ հայկական խմբերի եւ «Հայկական հարցի» հանդեպ ցարական Ռուսաստանի բացասական դիրքորոշումը, որն առիթ բաց չէր թողնում դաժանորեն պատժելու ռուս-թուրքական սահմանն անցնող հայդուկային խմբերին: Այս առումով միանշանակ սխալ էր արշավախմբերում մեծ թվով մարտիկների ընդգրկումը, ինչպես նաեւ արշավախմբերի կազմավորման աշխատանքներին տեղի բնակչության ներգրավումը, որի հետեւանքով դեռ արշավանքը չսկսած՝ լրտեսների միջոցով ռուսական եւ թուրքական սահմանապահ զորամասերին եւ տեղի իշխանություններին հայտնի էին դառնում խմբերի մարտիկների քանակն ու երթուղին, որոնք համապատասխան միջոցներ էին ձեռնարկում նրանց սահմանանցումը կանխելու համար: Միեւնույն ժամանակ պետք է շեշտել, որ Հ. Յ. Դաշնակցությունը գրեթե իր ստեղծման օրից հայ-քրդական համագործակցության ուղղությամբ կատարել է մի շարք քայլեր, սակայն, դրանք, բացառությամբ մասնավոր դեպքերի, որեւէ ընդհանրական ու շոշափելի արդյունք չեն տվել: Այսպիսով, մեր կարծիքով, առավել նպատակահարմար էր արշավախմբերում ընդգրկել այնպիսի անհատների, որոնք ունեին ռազմական փորձ ու մարտական հմտություն: Չպետք է մոռանալ, որ արշավախմբերի մի մասի սահմանանցումը բացահայտվել է մարտիկների անփութության հետեւանքով: Միաժամանակ սխալ պետք է համարել նաեւ 1903-1904 թթ. տիրող այն մտայնությունը, թե անհրաժեշտ է Երկրին օգնել միանգամից՝ 1-2 մեծաքանակ խմբերով: Այս պարագայում հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ նման խմբերը անխուսափելիորեն նկատվելու էին թուրք-քրդական զորքերի կողմից, որի արդյունքում կռիվը տասնապատիկ ուժերի դեմ դառնալու էր անխուսափելի, ինչն էլ հանգեցնելու էր խմբերի եւ զենքերի կորստին: Սխալ է նաեւ այն կարծիքը, թե Թ-որգոմի «Մրրիկ» խմբի Սասուն հասնելը պատահականության արդյունք է. խմբում ընդգրկված էին այնպիսի հայդուկներ, որոնցից ամեն մեկը ուներ

80 Անդ, էջ 204:

ռազմական մեծ հմտություն, ինչն ինքնին մեծ նշանակություն ուներ ծուղակներից խուսափելու եւ անվտանգ Երկիր հասնելու առումով: Չպետք է մոռանալ նաեւ, որ այդ շրջանում արշավախմբերի կազմակերպման հանդեպ միանշանակ դրական էր արեւելահայ հասարակության վերաբերմունքը, որի ամենացայտուն ապացույցն է այն իրողությունը, որ Կարսի մարզի հայ ազգաբնակչությունը ամեն կերպ օժանդակում եւ մասնակցում էր արշավախմբերի կազմակերպման աշխատանքներին, միշտ նրանց Երկիր էր ճանապարհում բարձր տրամադրությամբ, եւ միշտ էլ արշավախմբերի կազմում ընդգրկվել ցանկացողների թիվը մի քանի անգամ գերազանցում էր արշավախմբերի մասնակիցների թվաքանակին: Այդ ժամանակ ՀՅԴ-ն գրեթե բոլոր հայտնի գործիչները դրական էին գնահատում արշավախմբերի կազմակերպման գործը, իսկ նրանցից ոմանք անձամբ էին մասնակցում այդ աշխատանքներին կամ անդամագրվում արշավախմբերի կազմում՝ թեկուզեւ տասնապետի պաշտոնով: Միաժամանակ Սասունի պաշտպանների եւ նրանց օգնության շտապող հայ քաջորդիների սխրագործությունների պատմությունները տարածվելով ժողովրդի մեջ՝ ոգեշնչում եւ ազատության ու պայքարի տրամադրություններ էին հաղորդում նրան: Բայց արշավախմբերի կազմակերպումն ու Երկիր առաքումը ունեցավ նաեւ իր բացասական հետեւանքները՝ 1. Իրենց նպատակին չհասան եւ ջախջախվեցին զինատար եւ մարտական այն խմբերը, որոնք կարող էին մեծ դեր խաղալ հայ ազատագրական պայքարում: 2. Ուժեղացավ ռուս սահմանապահ զորքերի հսկողությունը ռուս-թուրքական սահմանին, որը գրեթե անհնարին դարձրեց Կարսի մարզից զենքի փոխադրումը Երկիր: 3. Ավելի զգուշավոր եւ ուշադիր դարձան թուրքական զինվորները ու քրդական աշիրեթները, որոնք առիթ բաց չէին թողնում՝ կողոպտելու եւ ավերելու հայկական գյուղերը: 4. Արշավախմբերի կազմակերպումն ու զինումը հայ քաղաքական շրջանակներից խլում էին մեծաքանակ նյութական միջոցներ, որոնք կարելի էր օգտագործել ինչպես հայ ազգաբնակչությանը զինելու, այնպես էլ այլ նպատակներով: